



27. ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի անգամ մի ձիավոր գնաց մեկի մոտ դռնախ: Երբ որ մըթ-
անց էս ձիավորը ձին նստեց, շնորհակալություն արեց նրանց ու
Դուս գնաց: էս ձիավորը դեռ հլա մի քիչ նոր էր հեռացել, տեհավ,
որ մի մարդագեղ հետևից դալիս ա: Ձին նրա վրա բռեց ու թուրը
հանեց, նրա ջուխտ ծծերը քոթից կտրեց, վե քցեց: Համա իրան էլ
Վժան շնստեց՝ իրա ձիու մորը շանչերով մարդագեղը հղել էր:
Մարդագեղը վազեց, ձիավորն էլ նրա հետևից: Տեհավ, որ մտավ
էն տունը, որտեղ նա էն օրը դռնախ էր: Նրա հետևից բուսուն քա-
շեց, տեհավ որ վրի մորթին հանեց ու տարավ պահեց աթարանո-
ցում, որտեղ ցան էր լցրած, ու ինքը, որ մի սիրուն աղջիկ էր,
գնաց մտավ տուն:

էս մարդը գնաց հանեց էն մորթին ու դրսի թունդիրը լավ վա-
ռեց, քցեց էդ մորթին մեջը ու էրեց: էստեղ մորթին էր էրվում,
տանը աղջիկը ձեն էր ածում, ծկլտում, դես ու դեն ընկնում: Տանը-
ցիքը մնացել էին զարմացած: Հենց որ էրվեց մորթին, վերջացավ,
աղջիկն էլ դնջացավ: Հետո գնաց տուն ու մին-մին նազլ արեց
նրանց, ոնց որ պատահել էր: Աղջկա մարդը շատ շնորհակալ էլավ
նրանից: Սրանից դենը էս աղջիկը էլ չէր էթում մարդագեղություն
անելու: Առաջ ցերեկը տնեցոնց հետ ուտում, խմում, խոսում էր,
համա գշերը էթում էր մարդագեղություն անելու:
